

ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ. Հայ-բյուզանդական հետազոտություններ. Երևան, ԵՊՀ հրատ., 2002, հ. 1, 822 էջ, հ. II, 936 էջ:

Սրևանի սեփական համալսարանի Հրատարակչությունը «Աճեմյան մատենաշարի»-ի երրորդ հատորի երկու գրքերով գիտական հանրությանն է ներկայացրել Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ,



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչ Միքայելի Բարթիկյանի «Հայ-բյուզանդական հետազոտություններ» վերնագրով երկհատորյակը, որի մեջ ամփոփվել է ականավոր գիտնականի շուրջ կեսդարյա գիտական աշխատանքների զգալի մասը՝ 131 տարարնույթ հոդվածներ, հրատարակումներ, գրախոսություններ տպագրված Հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և հունարեն Հայաստանի ու արտասահմանի մի շարք գիտական ժողովածուներում ու պարբերականներում:

Հ. Բարթիկյանի ժողովածուն բացվում է Հեղինակի Հայ-բյուզանդական հարաբերությունների հազարամյա պատմությանը նվիրված սեղմ, բայց ընդգրկուն ակնարկով, որտեղ նա առանձնացնում է Հայաս-

տանի կյանքում Բյուզանդիայի խաղացած երկակի դրական և բացասական դերերը: Առաջինը Հայոց մշակույթի վրա բյուզանդական քաղաքակրթության գրական ազդեցությունն էր, իսկ երկրորդը կայսրության Հայաստանը գրավելու ու բյուզանդական նահանգի վերածելու ձգտումը:

Հ. Բարթիկյանը Հայ-բյուզանդական բազմադարյա հարաբերությունների պատմությունը բաժանում է մի քանի փուլերի, շեշտում սրանցից յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունը, արժեքավորում Հայ-բյուզանդական հարաբերությունների Հայտնի Հետազոտողներ Ն. Ագոնցի, Ա. Գրեգուարի, Ս. Տեր-Ներսիսյանի, Կ. Թումանովի և Ա. Կաթանի աշխատանքները, դնահատանքի ջերմ խոսքեր հղում իր ժողովածուի հրատարակության հովանավոր Շահե արքեպիսկոպոս Աճեմյանին:

Հայն ու ընդգրկուն է ժողովածուում արծարծված հարցերի շրջանակը: Դրանում շոշափվում են շուրջ երեք տասնյակ գիտական թեմաներ, գիտության տարբեր բնագավառներ ու ուղղություններ: Խորությամբ ու մանրակրկիտ լուսաբանվում են աղանդավորական շարժումների, Հայոց և բյուզանդական եկեղեցիների ու դրանց կապերի, երկու երկրների հասարակական-տնտեսական հարաբերությունների, Հայկական, բյուզանդական, քրդական էպոսների, Հայկական գաղթագնացության ու գաղթօջախների, կայսրության մեջ և ուրիշ երկրներում Հայ տարրի խաղացած դերի, սրբախոսական գրականության, բնագրագիտության, աղբյուրագիտության, պատմական աշխարհագրության և գիտության այլ բնագավառների հարցեր:

Ակադեմիկոս Հ. Բարթիկյանի վաղ շրջանի ուսումնասիրությունները նվիրված են պավլիկյան շարժմանը: Նա հանգամանալից ներկայացնում է այդ շարժման աղբյուրները, ճշգրտում դրա սկզբնավորման

ժամանակաշրջանը, անդրադառնում պավլիկյանների ակունքներին, նրանց համայնքի կազմակերպությանը, դադափարական ու ռազմական առաջնորդներին, վերջիններիս և համայնքի ուրիշ ղեկավարների գործառույթուններին: Քննության են առնվում նաև պավլիկյան շարժման վերընթացն ու վայրէջքը, աղերսները պատմական բազմաբնույթ իրողություններին: Նմանատիպ խնդիրների առաջադրումն ու քննարկումը Հայ պատմագրության մեջ նորություն են: Աղբյուրագիտական անգնահատելի արժեք ունեն պավլիկյան շարժմանը նվիրված բյուզանդացի 11 հեղինակներից կատարված հայերեն թարգմանություններն ու դրանց կցված ծանոթագրությունները: Պավլիկյան շարժումը Հ. Բարթիկյանը քննության է առել այնպիսի խորությամբ ու մանրակրկիտությամբ, որ թվում էր, թե հարցը սպառված է հիմնավորապես և դրան անդրադառնալու հարկ չկա: Սակայն վերջերս, Հենվելով Վատիկանի Առաքելական գրադարանի XVII դ. Անանունի և XIX դ. 50-ական թվականներին Ֆիլիպուսյոյտում Ռուսաստանի Հյուսիսատոս Ն. Գերովի տեղեկությունների վրա, երևան հանեց ուշագրավ ու կարևոր փաստեր, որոնք դարձյալ առնչվում են այդ շարժմանը, բայց արդեն նոր ժամանակներում:

Ակադեմիկոսի դիտական գործունեությունն մեջ Բագրատունյաց և Հետագրատունյաց դարաշրջանների Հայաստանի ու Բյուզանդիայի բազմաբնույթ կապերի մանրագնին քննությունն առանձնահատուկ տեղ է գրավում: Այս ասպարեզում նրա դերն առավել ակնառու է, որովհետև Հ. Բարթիկյանը շեշտակիորեն ընդլայնեց հիմնահարցի աղբյուրագիտական հենքը՝ մեկը մյուսի հետևից երևան հանելով բյուզանդական աղբյուրների մի ամբողջ շարք, որոնց տվյալները համադրելով Հայ աղբյուրների տվյալներին՝ տեսական խոր ընդհանրացումներով ստեղծեց Հայ-բյուզանդական առնչակցությունների սեփական հայեցակարգը:

Հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության պատկերը խիստ աղոտ ու թերի կարող էր լինել, եթե երևան չհանվեին երկու երկրների տնտեսական կյանքի

որոշ մանրամասներ: Վերջիններս արտացոլվել են բովանդակությամբ տարբեր աղբյուրներում և լույս են սփռում նաև քաղաքական պատմության հիմնահարցերի վրա: Իբրև օրինակ մատնանշենք Եվստաթիոս Բոյիլասի կտակը, որն ուսումնասիրել ու թարգմանել է Հ. Բարթիկյանը: Այս հուշարձանը, բացի Հայաստանի և Բյուզանդիայի տնտեսական պատկերը ուրվագծելուց, երևան է հանում մեկ այլ ոչ պակաս կարևոր մանրամաս: Ընթերցողը հասու է լինում, թե ինչպես իր նվաճումներն իրականացնող Բյուզանդիան բանեցնում էր մի դործելաոճ, որով ընկի ժողովուրդը բռնութայամբ տեղահան էր արվում Հայրենիքից և նրա փոխարեն հաստատվում էին եկվոր բյուզանդացիները: Ահա այսպես բյուզանդացի հարուստ ափսոսանք Եվստաթիոս Բոյիլասը հաստատվել էր Տայքում և 1059թ. դրել իր նշանավոր կտակը:

Հ. Բարթիկյանի ուշագրությունը բեռավել է նաև խնդրո առարկա ժամանակաշրջանի վիմագիր արձանագրություններին, որոնց մուծ ու առեղծվածային թվացող տերմինները նա վերծանել է ու հավաստիորեն մեկնաբանել: Ի դեպ, նշենք, որ վիմագրությունը և ընդհանրապես հնագրությունը վաղուց են եղել նրա հետաքրքրությունների կենտրոնում: Ակադեմիկոս Հ. Բարթիկյանն առաջինն է ընթերցել Գառնիի բաղնիքի հունարեն հայտնի արձանագրությունը, վերծանել և իմաստավորել Գառնիում Տրդատ I արքայի հունարեն արձանագրությունը և հավաստել Մովսես Խորենացու տեղեկությունների արժանահավատ լինելը:

Կրիկյան Հայաստանի և Բյուզանդիայի կապերի լուսաբանությունը Հ. Բարթիկյանի ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ են գրավում: Հեղինակն անդրադառնալով Հայոց և բյուզանդական եկեղեցիների կապերին, ցույց է տալիս, որ բյուզանդացի աշխարհիկ ու հոգևոր գործիչները Հայոց թագավորներին ու կաթողիկոսներին իրենց հղած նամակներում թեև շոշափում էին երկու եկեղեցիների միավորման հարցերը, սակայն դրանց ձալքերում արձարծվում էին քաղաքական խնդիրներ: Հայ աղբյուրներում թեև չեն պահպանվել

այդ նամակների հասցևատերերի պատասխանները, սակայն չ. Բարթիկյանը բյուզանդացի նամակագիրների գրելաճից բխեցնում է ավյալ ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակը ինչպես Բյուզանդիայում, այնպես էլ Հայաստանում: Ըստ այդմ, եթե նամակները գրվել են կուպիտ, հայերի արժանապատվությունը վիրավորող ոճով, ապա այդ պահին Կիլիկյան պետությունը գրությունը ծանր է եղել և այն կայսրության օգնության կարիքն է զգացել, իսկ եթե բյուզանդացիները գրել են բարեկամական ու սիրալիք շեշտով, ապա նրանք փորձել են Կիլիկիայի Հետ հարաբերությունները սերտացնել նրան դաշնակից ունենալու միտումով: Հեղինակը վերոհիշյալ նամակներից կոհում է. թե հայ դործիչները երբևէ իրենք են բյուզանդական եկեղեցու Հետ միավորվելու նախաձեռնողները եղել, բայց այդ փորձերը բոլոր դեպքերում սոսկ դիվանագիտական քայլեր են եղել, խուսա՛նավելով նրանք վերջիվերջո մերժել են այդ միությունը:

Ակադեմիկոս Շ. Բարթիկյանի պատմաբանասիրական հարցերի արծարծումը քաջ հայտնի է բոլորին: Անհայտ չէ նաև նրա բնադիրտական բնույթի հարցերի քննությունը: Այս ժողովածուում տպագրված հոդվածներից մեկում հեղինակը հիմնավորում է միջնադարի ականավոր մտածող Անանիա Շիրակացու դրական ժառանգության ուսումնասիրության կարևորությունը առանձնացնելով իսկական գործերը հանիրավի նրան վերագրվածներից: Այնուհետև մեկ ամբողջ հոդվածաշարով Շ. Բարթիկյանը հայտնագործեց մեզանում Անանիա Շիրակացուն վերագրված մի քանի աշխատությունները իսկական հեղինակներին: Իր փաստարկներն ու եզրահանգումները նա ամրապնդեց հունարեն և հին հայերեն բնագրերի զուգադրություններով ու քննական վերլուծություններով:

Շ. Բարթիկյանը, ինչպես հայտնի է, աշակերտել է նշանավոր արևելագետ-հայագետ Հովսեփ Օրբելուն, բայց իր գիտական հետաքրքրություններով ավելի շուտ կանգնած է Նիկողայոս Ադոնցի կողքին և նրա գործի շարունակողն ու զարգացնողն է: Բովանդակային առումով Ադոնցի Փարի-

զում հայերին տպագրված «Պատմական ուսումնասիրությունները» և Լիսաբոնում Ֆրանսերին հրատարակված «Հայ-բյուզանդական ուսումնասիրությունները» սկզբունքորեն քիչ են տարբերվում Շ. Բարթիկյանի ներկա ժողովածուից, սակայն վերջինս նախորդների համեմատ ունի մի քանի առավելություն: Եթե Ն. Ադոնցը մի շարք դեպքերում առանձին հիմնախնդիրներ էր առաջ քաշում կամ նոտաձեռնում դրանց ուսումնասիրությունը, ապա Շ. Բարթիկյանը, շարունակելով նրա գործը, դառնում է ոչ միայն նոր պապարների նախաձեռնող, այլև արծարծված հարցերը նորովի քննող ու աղբյուրագիտական նորադյուտ տվյալներով հիմնավորող: Հիշատակենք թեև ուղի մեկ-կրկու փաստ: Եթե Ն. Ադոնցն ընդհանուր դժերով անդրադարձավ բյուզանդական էպոս «Դիպենիս Ակրիտասին», ցույց տվեց նրա կապը հայկական միջավայրի հետ, ապա Շ. Բարթիկյանը հիմնավորապես ուսումնասիրեց էպոսը՝ դրան նվիրելով իր դոկտորական ատենախոսությունը: Կամ եթե Ն. Ադոնցն, անդրադառնալով Բյուզանդական կայսրության մեջ հայերի խաղացած դերին, գտնում էր, որ բյուզանդական աղբյուրներում նրանց տոհմանունները չեն պահպանվել, ապա Բարթիկյանն այդ նույն աղբյուրներում հայտնաբերեց Գնունիների, Մամիկոնյանների և Նույնիսկ Մաշտոցյանների տոհմանունները: Նման կերպով նա ուսումնասիրություն նվիրեց Բյուզանդիայում շուրջ յոթ հարյուրամյակ կարևոր դեր խաղացած հայկական ծագում ունեցող Ղավրասների տոհմին:

Կարևոր է նաև աղաթանգեղադիտությունների բնագավառում Շ. Բարթիկյանի ներդրումը: Նա իրականացրել է այս ժողովածուում տեղ գտած Աղաթանգեղոսի պատմության հունարեն նորագյուտ երկու խմբագրությունների հայերեն թարգմանությունները:

Այլ առիթով՝ Հունաստանում դասախոսություններ կարդալու հրավիրված դիտնականի ուղարկությունից չեն վրիպել հունական գիտական ժողովածուներում հայ դաղթախների մասին իրազեկող գանձազան նյութերը, որոնց մի մասը քաղված է

հունարեն հրապարակումներից, իսկ մյուսները բնավրային քննություններ ու մեկնաբանություններ են: Այս նյութերը լույս են սփռում Փոքր Ասիայի արևմուտքում և հունական կղզիներում հաստատված հայության տեղաշարժերի, զբաղմունքի, սովորույթների. հոգևոր-մշակութային կյանքի, տեղաբնիկների հետ ունեցած բազմաբնույթ կապերի վերաբերյալ: Նշված նյութերը ժամանակագրորեն սկսվում են միջնադարից ու ձգվում մինչև անցյալ դարի սկիզբը:

Գաղութահայ կյանքի ուսումնասիրություն համար անկարևոր չեն նաև Վառնայի ու Հարավսլավիայի հայկական համայնքների մասին վկայող սլավոնական տեղեկությունները: Վերևում ակնարկվեց մեզանում արմատացած ու տարածում գտած որոշ գրույթներ ու եղրահանգումներ վերանայելու ու նորովի մեկնաբանելու գիտնականի ջանքերի մասին: Տվյալ սլավոնական գրույթում դրանք առնչվում են սլավոնական անցուղաբերում կարևոր գեր ստանձնած Գրիգոր Մագիստրոսին, հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձին և Կիլիկիայի թագավոր Գվիդոն Լուսինյանին:

Անգրադառնալով Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցին՝ Հ. Բարթիկյանը վկայաբերում է նրա բանաստեղծություններից մեկը, որի մեջ նշանավոր քաղաքական գործիչը կոչ է անում ոտքի կանգնել ու կռվել Բյուզանդիայի ծավալապաշտության դեմ: Այսպիսով, հերքվում է պատմագիտության մեջ արմատացած այն տեսակետը, թե Գրիգոր Մագիստրոսը ներկայացնում էր բյուզանդասերների կամ բյուզանդամուրհների կուսակցությունը և ծառայել է կայսրության նվաճողական քաղաքականությանը:

Նույն ելակետով Հ. Բարթիկյանն առաջ է քաշում Պետրոս Գետադարձի գործունեության գնահատման հարցը, գործիչ, որը սկզբնաղբյուրներում ներկայացվել է խիստ հակասական: Նա, նոր լույսի ներքո քննելով Մատթեոս Ուռհայեցու երկի տվյալները, կարծում է, որ, իրոք, Պետրոս Գետադարձը հայ և բյուզանդական եկեղեցիների միություն հարցում նախապես տվել էր իր համաձայնությունը, իսկ 1042 թ. երկրորդ

կեսին կամ 1043 թ. սկզբին մեկնել էր Կոստանդնուպոլիս ու ստորագրել պայմանագիր: Կաթողիկոսի այդ քայլի դրապատճառն իրավացիորեն փաստարկվում է հայոց պետականության համար ստեղծված աննախադեպ ծանր սլավոններով, երբ բյուզանդական կայսր Միքայել Կալափատեսի արշավանքը թեև հայկական ուժերը հետ էին մղել, բայց այն երկրի համար թանկ էր արժեցել: Սպասվում էր նոր կայսեր՝ Կոստանդին Մոնոմախի կողմից ռազմական գործողությունների վերսկսումը, որի հետևանքներն աներևակայելի կարող էին լինել: Հ. Բարթիկյանի կարծիքով Պետրոս Գետադարձը հարկադրված էր քաղկեդոնականություն ընդունել, որը, սակայն, սոսկ դիվանագիտական քայլ էր:

Հաջորդ գործիչը, որին նույն հայեցակետով անդրադառնում է Հեղինակը, Կիլիկիայի հայոց դահին տիրացած Գվիդոն Լուսինյանն է (1342–1344 թթ.): Նա հերքում է Գվիդոնի կաթողիկ լինելու վարկածը, ցույց է տալիս, որ Կիլիկիայի աշխարհիկ ու հոգևորական բարձրաստիճան այրերը Գվիդոնին հրավիրելով, փորձել են նրա միջոցով Արևմուտքին առերես դավաբանական ու ծիսական զիջումներ կատարելով՝ պետությունը փրկել մոտալուս կործանումից: Հեղինակը Գվիդոն Լուսինյանի սլավոնությունը համարում է քաղաքականութունից և դիվանագիտությունից հնուր կանգնած «մասսաների» գործ:

«Հայ-բյուզանդական հետազոտություններում» տեղ է գտել նաև Հ. Բարթիկյանի ծավալուն ու կարևոր ուսումնասիրությունը, որտեղ անդրադարձ է կատարվում Փոքր Հայքում քրիստոնեության արմատներ ձգելուն: Հեղինակի դիտարկումով այդ թեման բազմիցս արծարծվել է սկզբնաղբյուրներում և ուսումնասիրողների կողմից, բայց վերջիններիս ուշադրությունը դամվել է միայն Մեծ Հայքի վրա, այնինչ Փոքր Հայքը մնացել է ստվերում: Հենվելով մի քանի վկայաբանությունների, հատկապես Արթուր Եվստրատիուսյանցի տվյալների վրա, Հ. Բարթիկյանը հակված է այն համարելու IV դ. կեսերի հունարեն գրություն, որտեղ արտահայտվել են Փոքր Հայքում և Կասպղոլիկիայում քրիստո-

նկույթյան տարածման շատ իրողություններ: Ըստ նրա, Փոքր Հայքում նոր կրոնով տոգորված էին Հասարակության բոլոր շերտերը, այն սոցիալական բնույթ էի կրել, այլ ամենից առաջ Հայերի ազգային ինքնության պահպանմանն ուղղված շարժում էր:

Անդրադառնալով հիշյալ ոկզնագրությունների բնագրային որոշ հարցերի, Հ. Բարթիկյանը ցույց է տալիս, որ V դ. այն սրբոց թարգմանչաց կողմից հայերեն է թարգմանվել, իսկ հունարեն բնագիրը թեև մեղ չի հասել, բայց պահպանվել է X դ. Սիմեոն Մետափրաստեսի կատարած խմբագրությունը: Այս վկայաբանության հայերեն բնագիրը հրատարակվել է երկու անգամ՝ 1813 և 1874 թթ.: Առաջինն իրականացրել է Մ. Ավգերյանը, իսկ երկրորդի հեղինակը Հայտնի չէ: Հ. Բարթիկյանը պարզում է վկայաբանության բնագրում Մ. Ավգերյանի կատարած ընդմիջարկությունները, ցույց է տալիս դրանց հունարեն տերմինների իմաստների շեղումները Մետափրաստեսի խմբագրած տեքստից, որն արդյունք է սովյալ աղբյուրի մեկ ուրիշ՝ լատիներեն թարգմանության հաշվառման: Նա բաղում օրինակներով ներկայացնում է հայերեն թարգմանության տերմինների իմաստային անձամասպատասխանությունները: Հիշատակում է նաև Մ. Ավգերյանի ընդմիջարկություններից միայն մեկը և մատնանշում, թե մյուսները ևս չեղվում են հունարենից: Հիշյալ բնագրի քննության արդյունքը սլարդ է դառնում. Մ. Ավգերյանի կազմած վկայաբանության տեքստը գիտական աշխատանքների համար աննպատակահարմար է օգտագործել:

Սրբոց Եփեսոսիոսյանց վկայաբանության մեջ նկարագրված իրադարձությունները տեղի են ունեցել Փոքր Հայքի Արավլական, Սատազ, Նիկոպոլիս և Սեբաստիա քաղաքներում: Փոքր Հայքի և Կապադովկիայի բնակիչները մինչև Դիոկլետիանոս կայսեր (284–305 թթ.) բարեփոխությունները եղել են քրիստոնյաներ և այդ նահանգները կառավարվել են իրենց բնիկ, այսինքն Հայ և կապադովկիացի պաշտոնյաների կողմից: Սրանք ընդգրկմանալով Հռոմի համաձուլարար քաղաքականությանը,

նր, քրիստոնեությունը ընդունելով փորձել են պահպանել իրենց անօրինությունների գտնվող բնակչության ազգային գիմագիծը: Մակայն Հոռմը նրանց դեմ պայքարը իրականացրել է քրիստոնյաներին հայածելու քողի տակ, ինչպես նաև նշված նահանգապետերի պաշտոնավորումով: Սրբոց Եփեսոսիոսյանց վկաները հինգն են՝ Եփեսոսափոս, Ափրսենափոս, Եվգենիոս, Օրենտես և Մարգարիոս: Հեղինակի դիտարկումով նրանք հայեր են, այդ է ցույց տալիս Եփեսոսիոսի հայական անունը՝ Հուսիկ, իսկ վկաներից մեկ ուրիշը՝ Մարգարիոսը, իր կնոջ հետ խոսում է հայերեն: Իրենց հակառակորդների հետ բանավիճելիս, վկաները հայանում են մանկուց քրիստոնյա ընտանիքներում մեծանալու մասին: Այս փաստն աչքի առաջ ունենալով՝ Հ. Բարթիկյանը հանգում է կարևոր եզրակացության, ըստ այդմ, քրիստոնեությունը Փոքր Հայքում տարածված է եղել III դ. կեսերից:

Սովորաբար գիտնականի ուսումնասիրության ոլորտը, նրա գիտական հետաքրքրություններն ընդլայնվում են աստիճանաբար, ժամանակի ընթացքում, սակայն մեր հեղինակն այս առումով բացառություն է: Նրա գիտական առաջին քայլերը նշանավորվեցին ավանդական ուղղություններից զատ նորերի ընտրությամբ ու վարպետամբ: Հ. Բարթիկյանի ուսումնասիրությունների մի մասը վերաբերում է այնպիսի բնագավառների, որոնցով Հայաստանում կամ բնավ չէին զբաղվել, կամ էլ զբաղվել էին խիստ հպանցիկ:

Ակադեմիկոս Հ. Բարթիկյանի խնդրո առարկա ուսումնասիրությունները միջադային հնչողությունն ունեն: Դրանք առնչվում են ոչ միայն Հայաստանի և Բյուզանդիայի պատմության ամենատարբեր կողմերին, այլև հարևան ու հեռավոր շատ երկրների ու ժողովուրդների կյանքի հանգուցային խնդիրներին: Պատահական չէ, որ դրանցից մի քանիսը դարձել են միջազգային դիտաժողովների գեկուցումների նյութեր, իսկ դրանց հեղինակն արժանավոր կերպով ներկայացրել է իր ժողովրդին, ինքն էլ ձեռք բերել համընդհանուր ճանաչում: Լայն ու ծավալուն է Հ. Բարթիկյանի

աշխատությունների տպագրության աշխարհագրությունը՝ Ս. Էջմիածին, Լոնդոն, Փարիզ, Լիսաբոն, Աթենք, Թեսալոնիկ, Նիկոզիա, Մոսկվա, Երևան, Սանկտ Պետերբուրգ, Սոֆիա, Բուխարեստ, Սվերդլովսկ և ուրիշ վայրեր:

Վերջում նշենք, որ ժողովածուում տեղ են գտել Հ. Բարթիկյանի մի քանի գրախոսություններն ու ընդգրկմասոսներին ուղղված սրտատախանները: Այս աշխատություններում աչքի է զարնում հեղինակի բանավիճելու բարձր կուլտուրան, փաստական նյութին խոր ու հիմնավոր տիրապետելը,

ընդգրկմասոսների գրությունների և տեսակետների հաճախ խիստ բայց արդարացի քննադատությունը:

Հ. Բարթիկյանի «Հայ-բյուզանդական հետազոտություններ» երկհատորյակը նշանակալից իրադարձություն է հայ միջնադարագետների կյանքում: Այն երկար տարիներ կմնա մի քանի սերունդների սեղանի գիրքը: Շնորհավորելով Հ. Բարթիկյանին ու գերաշնորհ Շահն արքեպիսկոպոս Աճեմյանին՝ հուսանք, որ նրանց համագործակցությունը առաջիկայում ևս կշարունակվի:

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ